Նախ և առաջ ակնեղէն բնաւ ոչ գոյ ի նոսա, և ի գանձին 6 կուտ ծանրութեամբ ի վերայ կաղամարի միոյ զումրուխտ մի գոյր, էառ զայն Թովմաճանն հրամանաւ նոցին, և ի տեղի նորին եդ մէրճան մի, զի աւելի ախորժելի էր նոցա մէրճանն քան զզումրութն, ըստ այսմ իմա և զայլն։ Այլ եւս վախճանեալ թագաւորաց ոսկեհուռ սուսերս և մեծամեծ հանդերձս իւրաքանչիւրոցն անուամբ կայր պահեալ և այլ հազարաւոր թօփ պէս պէս կտաւեղինաց և այլ հարիւրաւոր թօփ պէս պէս կերմէսուտից և զանազան գունով գեմխայից. և տասն բաստաւ կարմիր և կապոյտ չուխայից. և 15–20 թօփ Վենետիկեան ծանր ոսկեթել խեթայի զոր վասն զգեստու թագաւորի և եւս վասն զարդուց ինչ եկեղեցւոյ ի գործ ածեն. և տասն կամ տասնեւհինգ արծաթեայ զարդս ջուրոյ և արծաթեայ սուսերս. և լաւ շէշէնէ հրացանս օսմանցւոց հարիւր կամ 150. իսկ հրացանս այսինքն թուֆէնկք ֆրանկաց չեն նոցա հաճելի, և են 2 հազար հին և նոր։ Իսկ ոսկին է բազում, ի ներքս ի պալատի պահեալ կայ։ Եւ ի ձեռս գանձապետի 3000 վաքիէ, մինչեւ չորս հազար գտանի. և մի վաքիէ ոսկի՝ արժէ 25 ղրշ. և մին վաքիէի ոսկիին կըշեռքն է 8 տրէմ կ. Պոլսոյ։ Արդ այսքան 3000 վաքիէ ոսկին ամ ըստ ամէ գայ թագաւորին՝ ի կողմնակալաց միոյ տէրութեան իւրոյ, և անցանէ ի ձեռս գանձապետին վասն ծախուց տնտեսատան թագաւորի, և եւս ռոճիկ զօրաց, և վասն գնելոյ զպիտոյս գանձատանն։ Իսկ գանձապետին վարձքն և վաստակն ի ծախելն զայսոսիկ ոսկիսն 100ին տասն է՝ որ առնէ 15 քսակ։ Եւ բաց յայսմանէ գիւղ մի եւս ունի՝ յորմէ շահի հազար ղրշ. և այլ եկամուտ եւս ի թագաւորէն ունի վասն ռոճկի 50 ղրշ. յամսեանն և այլ աստուստ և անտուստ ունի փոքրիկ ինչ եկամուտս՝ ընդ ամէնն տասն հազար մարշիլ որ է ղրշ.։ Շահի ի տարին գանձապետն՝ որ առնէ 20 քսակ ղրշ.։ Բայց ծախքն եւս բազում են, զի զ30 սպասաւորսն պարտի պահել. և թէպէտ Թովմաճանն ոչ էր այնքան շռայլ, և փոքր ծախս առնէր վասն իւր, բայց այսու ամենայնիւ ոչ կարաց հանել զծախս տուեալ ընծայից թագաւորին 1500 ղրշն. որ 18 ամիս գանձապետութիւն արար, զի յորժամ ել ի Կեօնտէրէն՝ ունէր ընդ իւր 40 վաքիէ միայն՝ որ առնէ հազար ղրշ. և ոմանք ոչ գիտելով՝ ասեն թէ Թովմաճան ի Հապէշ ի գանձապետութեան բազում ինչս շահեցաւ։ Հապա ուր դիցուք զծախսն գնալոյն և թէ ելանելոյն և մինչեւ ի Ճիտէ դառնալն 1500 ղրշ. ոչ բաւականացաւ. և այլ 26 ամիս եւս ժամանակ ընդվայր անցոյց, և զորդին եւս զՊօղոսն ոչ թոյլ ետուն գնալ ընդ հօրն։

Արդ թողեալ զայս եկեսցուք ի կարգս պատմութեանս։

Այս թագուհին որ Իթեկէ կոչի՝ էր կին թագաւորի և ունէր զորդեակ մի ամուսնացեալ։ Մեռաւ իւր այրն և նստաւ որդի իւր փոխանակ հօրն, և այն որդին եւս ստացաւ զաւակ մի և յետ չորից ամաց թագաւորութեան մեռաւ թագաւոր որդին. և մայրն՝ այս Իթեկէ թագուհին՝ նստաւ յաթոռ թագաւորութեան որդւոյն բուռն զօրութեամբ, զի որդւոյ որդին այսինքն թոռն փոքր էր՝ ամաց հնգից, և այսու դաշամբ նստաւ յաթոռ որդւոյն, զի այն 5 ամաց թոռն իբրեւ հասցէ ի 16 ամս՝ զնա նստուսցէ յաթոռ թագաւորութեանն, ապա եթէ ոչ նստուսցէ, կամ մեռցի, ի լեռնէն իջուսցեն զմինն ի թագաւորազանցն։ Քանզի գոյ մին բարձր և անառիկ լեառն հեռի ի Կեօնտէրէն ժամս 6 ճանապարհաւ, և ամենայն թագաւորազունք Հապէշին անդ բնակին և են ամուսնացեալք և ամենայն ուտելի, ընդեղէնք և մսեղէնք գտանին անդ, զի վար և ցան ունին և եկեղեցիք և քահանայք և այլ ամենայն ինչ գտանին անդէն։ Եւ ի մէջ իւրեանց այս թագաւորազանցն կարգ և կանոն ունին. և եթէ ի քաղաքէն կամիցի ոք գնալ անդր, առանց հրամանի թագաւորին ոչ կարէ գնալ։ Եւ ի լեառն ելանելոյ ճանապարհ ոչ գոյ, զի ի միոյ տեղւոջէ 150 զրկաչափ չուանաւ ի վերուստ